



Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 31_Լ

29 հունիսի 2022 թվական

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2022
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 18_Լ ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5)-րդ և 6)-րդ ենթակետերով ու «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2022 թվականի փետրվարի 18-ի 18_Լ որոշմամբ հաստատված կառուցվածքում և հաստիքացուցակում հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Հայ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնը Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնին և Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնին միաձուլելու արդյունքում կրճատել միաձուլվող ամբիոնի վարիչի և ավագ լաբորանտ-գործավարի հաստիքները:

2. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2022 թվականի փետրվարի 18-ի 18_Լ որոշմամբ հաստատված կառուցվածքում և հաստիքացուցակում լրացումներն ու փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումը հանդիսանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2022 թվականի փետրվարի 18-ի թիվ 18_Լ որոշման անբաժանելի մասը:

4. Հանձնարարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորին կրճատվող հաստիքների աշխատակիցների ծանուցումն իրականացնել՝ ՀՀ օրենսդրության և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից՝ բացառությամբ կրճատվող հաստիքների, որոնց վերաբերյալ որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտի հաջորդ օրը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

2022թ. հունիս «29»

Երևան